

ՎՐԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Պետերբուրգից հեռագրով հաղորդեցին Կովկասեան թեր-
թերին հետևեալը.—

Յունիարի 27-ին սրբազան Սինոդին կից մասնաժողովը որոշեց, որ Վրաստանի բոլոր հոգևոր դպրոցներում կատարեալ ազատութիւն տրուի վրացերէնի դասաւանդութեան: Էկզարքոսն ու եպիսկոպոսները Վրաստանում (ի միջի այլոց և Սուխումում) պէտք է նշանակուեն վրացիներէ: Էկզարխն անկախօրէն կը տնօրինի ներքին գործերը, Թիֆլիզի Սինօդական գրասենեակը (Синодальная кантора) կը վերացուի: Ինչ կը վերաբերի վրաց եկեղեցու ինքնուրոյնութեան և անկախութեան, այդ կը որոշի համառուօական եկեղեցական, ժողովը որը հազիւ թէ դրական լուծումն տայ խնդրին: Իրենց խօսքի վերջում Կիրիօն և Լէօ-նիդ եպիսկոպոսները յայտնել են, որ վրաց հոգևորականու-
թիւնն ու ժողովուրդը կը պահանջեն մի միայն եկեղեցու ան-
կախութիւն և հազիւ թէ բաւականանան մտքրած բարեփո-
խութիւններով:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Դեկտեմբերի 6-ին Ֆրանսիական Սենատը 181 ձայնով 102-ի դէմ ընդունեց եկեղեցին բաժանելու օրինագիծը այն ձևով, ինչպէս որ նա ընդունուելէր պատգամաւորական ժողովում: Յիշեալ օրէնքի դործադրութեան համար նշանակուած է պար-
լամէնտից դուրս առանձին մասնաժողով: Երբ վերջինս կազմած ծրագիրը կըքննուի պետական խորհրդում, օրէնքը կը հրատա-
րակուի պաշտօնական թերթում և կը դործադրուի յունիարից: — Մենք կարող ենք աւելացնել, որ օրէնքի վերաբերեալ բոլոր ձեականութիւնները վաղուց վերջացած են, օրէնքի դործադրու-
թիւնը սկսուած և արդէն ցուցակադրում են Ֆրանսիայի կա-
թոլիկ եկեղեցիներէ դուրսը, որ առանց արիւնհեղութեան չի
անցնում: Այդպիսի արիւնհեղութիւն տեղի ունեցաւ ս. Կլո-
տիլդի, ս. Պետրոսի և այլ եկեղեցիներէ դուրսը ցուցակադրե-
լիս: Թերթերից մի քանիսը երկիւղ են կրում Ֆրանսիայում
ներքին պատերազմից: